

**Տ. ԳԱՐԻԲԵԼ ԱՐԵՂԱ ՄԱՐԳՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒԾ
ԳՅՈՒՏ ԽԱԶԻ ՏՈՆԻՆ**

(27 հոկտեմբերի 2002 թ.)

*«Այլ ինձ քաւ լիցի պարծեի, քայց միայն ի խաչն
Տեսուն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որոյ ինձ
աշխարհ ի խաչ ելեալ է, եւ եւ աշխարհի»*

*«Սակայն քա՛նլ լիցի, որ եւ պարծենամ այլ քանով,
քան միայն մեր Տեր Նիսուս Քրիստոսի խաչով,
որոյ աշխարհը խաչված է ինձ համար, եւ էլ՝
աշխարհի համար»*

(Գաղ. Զ 14):

«Յանուն Նոր եւ Որդոյ եւ Նոգոյն Սրբոյ. ամէն»:

Միրելի՛ հավաքացյալ քույրեր և եղբայրներ ի Քրիստոս.

Խորին հուզմունքի մի պահ եմ ապրում անդրանիկ Պատարագս մաքուցելով Ամենայն
Նայոց Աղոթավայրում:

Նոգու մեծ ուրախությամբ և ցնծությամբ գոհություն և փառք եմ մաքուցում Ամենա-
բարձրյալ Աստուծուն, որպեսզի Տերը պարզևի ինձ ուղիղ վարդապետություն և անխտոր
վարք՝ ընթանալ Տիրոջ խաչի ճանապարհով:

«Շնորհ ունին այնմիկ՝ որ զօրացոյցն զիս ի Քրիստոս Յիսուս ի Տեր մեր, զի հաւաքարիմ
համարեցաւ կարգել ի սպասաորութիւն» (Ա Տիմ. Ա 12):

Թող Տիրոջ անկոտորում ոգին չլքի ինձ, այլ պահապան լինի իմ կյանքի ողջ ընթացքին:

Այսօր մեր Եկեղեցին փոնախմբում է Խաչին նվիրված չորս փոներից՝ Խաչի գյուտի հի-
շարակման օրը, որի պատմությունը գալիս է քրիստոնեության առաջին դարերից: Նայրնի
է, որ քրիստոնեությունը սկզբնական շրջանում գաղտնի է քարոզվել մարդկանց, մինչև որ
313 թ. Միլանի հրովարտակով ողջ Նոմնեական կայսրության փարածքում թույլատրվում է
պաշտել քրիստոնեությունը: Եվ փարբեր վայրերից մարդիկ ուխտի են գալիս Երուսաղեմ:

Այստեղ է գալիս նաև կայսեր մայրը՝ Նեղինե թագուհին, հեփամուր լինելով Քրիստոսի
խաչափայտը գրնելուն և հասնում է Գողգոթա, այն վայրը, ուր խաչվել է մարդկության
փրկության համար աշխարհ առաքված Աստվածորդին: Այդ ժամանակ Գողգոթան դարձել
էր մարդկանց կողմից լքված և արհամարհված մի վայր և գործածվում էր որպես
աղբարելի: Բարեպաշտ թագուհին իր օգնականներով մաքրում է փարածքը և Աստծո
օժանդակությամբ գրնում է Տիրոջ կենարար խաչափայտը:

«Զի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է, այլ փրկելոցս մեզ զօրութիւն Աս-
տուծոյ» (Ա Կորնթ. Ա 18):

Նոսմեական կայսրությունում խաչը մահաբեր գործիք էր համարվում և երբ ցանկանում էին մարդուն ամենադաժան և անարգ մահով պարծել՝ խաչ էին բարձրացնում, և միայն Քրիստոսի հարությանը է, որ խաչը դարձավ փրկության ճանապարհի ու միջոց և հարության կենարար ավերիս, քանի որ խաչի քարոզությունը Աստուծո գործություն է:

Ինչպես որ բժշկության մեջ մի խորհրդանշական սովորություն կա, որ հիվանդի սրտի վրա են դնում դեղը, և երակներով մարմնի բոլոր անդամներին առողջություն է սփռվում, այնպես էլ Քրիստոս մարդկանց կյանքի դեղը կազմեց՝ խաչը շնորհելով, որը փարածվեց ամբողջ աշխարհում:

Խաչի ուղեկցությամբ և զորակցությամբ է, որ կայսրը պարերազմ էր գնում, և Տիրոջ երկնաձայն խոսքն է գոտեպնդում նրան՝ «Մովա յաղթեսցես»:

Քրիստոսի խաչը ձգվեց մինչև երկինք և «ի խորս երկրի» ու քանդելով դժոխքի դռները՝ բացեց արքայության ճանապարհը: Քրիստոս մարդկային մարմին հագնելով՝ մեզ ցույց տվեց երկնքի ճշմարիտ ճանապարհը:

Այսօրվա Ավետարանը մեզ ուսուցանում է. «Եւ ապա երևեսցի նշան Ռդոյոյ մարդոյ յերկինս» (Մատթ. ԻԴ 30), այսինքն՝ մարդու Ռդոյոյ գալուստը լինելու է խաչի նշանով: Խաչը պետք է երևա, ապա գա Քրիստոս՝ դարձելու ողջերին և մեռածներին:

Մեր ժողովուրդը դարեր ի վեր հավապացել և հավապում է Տիրոջ խաչի կենարար գործությանը, այն ի գորտ է անգամ մեռածին հարություն փայտ, անշնչացածին կենդանություն պարգևելու: Ահավասիկ Տերը հավապարիմ է Իր ուխտին. Նա կենդանություն է շնորհում մեղքի և խավարի մեջ խարխափող մարդուն:

Խաչն է, որ մեզ ապավեն է լինում մեր կյանքի բոլոր օրերում, և մենք ցնծում ենք որպես լույսի որդիներ: Տիրոջ խաչը մեր փրկության անխախտ սյունն է. Տիրոջ խաչն է, որ մեզ շնորհում է իմաստություն՝ ճանաչելու ճշմարտությունը, Նրա կենդանարար Մարմնի և Արյան ճաշակումով նաև հաղորդ դառնալու համընդհանուր հարությանը: Մենք բոլորս ունենք մեր կյանքի անհափական խաչը կրելու հրավերը:

Խաչակնքել՝ նշանակում է հաղորդ դառնալ, հաղորդակցվել Քրիստոսի չարչարանքներին և հարությանը: Մարդ երբ երեսին խաչ է հանում, պարտավորվում է անելու և կատարելու այն ամենը, ինչ կատարեց Քրիստոս Իր երկրային կյանքում:

Քրիստոսի խաչը չորս բարերարության խորհուրդն ունի.

1. Վերին մասը ցույց է տալիս երկնքի արքայության բացվելը.
2. Ստորին մասը՝ դժոխքի ավերումը.
3. Չախ կողմը՝ մեղքերի թողությունը.
4. Աջ կողմը՝ շնորհների բաշխումը:

Ուրեմն, մտքենանք մեր գործերով Քրիստոսին և նմանվենք Իր իսկ կամեցած մարդուն, հավապանք Կենդանի Վեմին, որ թեպետ մարդկանցից անարգված, բայց Աստուծո առաջ ընկրյալ և պարզական է (հմմտ. Ա Պետ. Բ 4), և լինենք կենդանի Նրա միջոցով:

Թող Քրիստոսի խաչի խաղաղությունը ճառագայթի աշխարհում և լույս սփռի մարդկանց հոգիներում այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն: